



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 41 -Ն

ք.Ստեփանակերտ

### ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՔՎԵԱՏՈՒՓԵՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 19/54 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածի 7-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ

1) միաժամանակ երկու և ավելի ընտրություն անցկացվելու դեպքում յուրաքանչյուր ընտրության քվեարկությունը կազմակերպելու նպատակով տեղամասային կենտրոնում տեղադրվում է մեկ քվեատուփ.

2) կախված քվեաթերթիկի չափսերից՝ 750-ից ավելի ընտրող ունեցող ընտրական տեղամասում նույն ընտրության քվեարկությունը կազմակերպելու նպատակով կարող է օգտագործվել երկու քվեատուփ՝ դրանք իրար վրա տեղադրելու միջոցով.

3) քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում է քվեատուփերի դատարկ լինելը, փակում, հատուկ կապիչներով կնքում է քվեատուփերը և տեղադրում տեղամասային կենտրոնում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց համար տեսանելի տեղում.

4) նույն ընտրության քվեարկության համար նախատեսված քվեատուփերից առաջինը լցվելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հատուկ կապիչով փակում է քվեատուփի ճեղքը և փոխում քվեատուփերի դասավորվածությունը՝ լցված քվեատուփը տեղադրելով ներքևում.

5) քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ երկրորդ քվեատուփը բացվում է առաջին քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեսակավորելուց հետո:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի «Տեղամասային կենտրոնում մեկից ավելի քվեատուփեր օգտագործելու կարգը սահմանելու մասին» թիվ 19/54 որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս. ԱՐԶՈՒՄՆԱՅԱՆ